ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2010թ. հունիսի 8-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 24-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ. Դավթյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգի հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

1. ԼՍԵՑԻՆ. 2009-10 ուսումնական տարվա պետական քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփման մասին (զեկուցող՝ պետական քննական հանձնաժողովների նախագահներ):

Հանձնաժողովների նախագահները հաշվետվություն ներկայացրեցին 2008-2009 ուսումնական տարվա համապատասխան մասնագիտացումների գծով բակալավրիատի և հեռակա ուսուցման բաժնի պետական քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների վերաբերյալ (հաշվետվությունները կցվում են), ինչպես նաև խորհրդի անդամների հետ քննարկեցին քննական գործընթացի հետ կապված իրենց տպավորություններն ու առաջարկությունները:

Ըստ այդմ, պետական քննական հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվել են դեկանատի կողմից նախատեսված ժամանակացույցին համապատասխան՝ առանց որևէ շեղման: Առավել գոհաչուցիչ են եղել Քաղաքացիական իրավունք, քաղաքացիական դատավարություն, ինչպես նաև քրեական իրավունք և քրեական դատավարություն մասնագիտացման ուսանողների քննական արդյունքները, նվազ գոհացուցիչ՝ Սահմանադրական իրավունք, Պետության և իրավունքի տեսություն և Միջազգային իրավունք մասնագիտացման ուսանողների քննական արդյունքները:

Դրական համարվեց այն, որ հատկապես բարձր գնահատված շրջանավարտները բավարար չափով իրազեկված էին ոչ միայն գործող օրենսդրությունից, այլև՝ ընդամենը քննությունից մեկ-երկու ամիս առաջ շրջանառության մեջ դրված օրինագծերից:

Դրականի հետ մեկտեղ, հանձնաժողովի նախագահները, հատկապես, սահմանադրական իրավունք և միջազգային իրավունք մասնագիտացման գծով, նշեցին մի շարք թերություններ :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Վ. Քոչարյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Մեղրյանը, Ռ. Եղյանը, Ս. Դիլբանդյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով պետական քննական հանձնաժողովների նախագահների դիտողություններն ու առաջարկությունները՝ 2009-2010 ուսումնական տարվա պետական քննություններում տեղ գտած թերությունների վերաբերյալ, կարևորելով դրանք հետագայում բացառելու, ինչպես նաև իրավագիտության ֆակուլտետում կրթության որակը բարելավելու անհրաժեշտությունը, հանձնարարել՝

ա/ ֆակուլտետի ամբիոններին՝

1. Հետևողական լինել մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պատրաստման ժամանակ օգտագործվող գրականության ծավալների և որակի նկատմամբ, դրանցում ներառելով ոչ միայն և բացառապես ռուսալեզու, այլ նաև այլ օտարալեզու աղբյուրներ:

2. Վերանայել մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների առաջարկվող թեմաները՝ ապահովելով դրանց արդիականությունը:
3. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմայի առանձնահատկությունից ելնելով՝ ապահովել դրանցում նաև պրակտիկ նյութերի օգտագործումը:
4. Ապահովել մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների գրախոսականների որակը, այն առումով, որ ծավալի և բովանդակության տեսակետից դրանք ոչ թե կրկնեն աշխատանքի վերաբերյալ ղեկավարի կարծիքը, այլ իրապես արտացոլեն աշխատանքի առավելություններն ու թերությունները:
5. Ողջ տարվա ընթացքում հետևողական աշխատանք տանել մագիստրոսական թեզեր և ավարտական աշխատանքներ պատրաստող ուսանողների հետ՝ ապահովելով աշխատանքների որակը և դրանց պատշաճ ներկայացումն ու հրապարակային պաշտպանությունը:

բ/ ֆակուլտետի դեկանատին՝

1. մշակել պետական քննական հանձնաժողովի աշխատանքների օրինակելի կանոնակարգի նախագիծ /դրանում անդրադառնալով հանձնաժողովի ձևավորման կարգին, անդամների անընդհատ մասնակցության ապահովմանը քննության ընթացքին, հարցեր տալու կարգին, հերթականությանը և այլն/ և ներկայացնել խորհրդի քննարկմանը:

2. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի հաղորդումը ուսումնական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ն. Այվազյան):

Հաշվետվությունը կցվում է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ռ. Եղյանը, Գ. Հարությունյանը, Ս. Մուրադյանը, Ա.Գաբուզյանը, Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում կատարված աշխատանքը գնահատել դրական:

3. ԼՍԵՑԻՆ. ՈՒԳԸ կատարած աշխատանքների մասին հաշվետվություն (զեկուցող՝ ՈՒԳԸ նախագահ Ա. Մանասյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. ՈՒԳԸ կատարած աշխատանքների մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում ՈՒԳԸ կատարած աշխատանքը գնահատել դրական:

4. ԼՍԵՑԻՆ. 2009-10 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման աշխատանքների և ընթացքի մասին (զեկուցող՝ դեկանի տեղակալ, ի.գ.դ. Հ. Խաչիկյան):

Հ. Խաչիկյանը ներկայացրեց, որ երկրորդ կիսամյակի քննաշրջանը սկսվել է մայիս ամսից: Հունիսի 8-26 նախատեսված է քննությունների համար, 28-29-ը բաց դռների օրեր են, իսկ առաջին լուծարքային շրջանը նախատեսված է անցկացնել հուլիսի 2-9ը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Վաղարշյանը, Ս. Մեղրյանը, Ս. Դիլբանդյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. 2009-10 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման աշխատանքների և ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

5.1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ. Ապրեսյանի՝ «Մասնագիտական (իրավաբանական) լեզվի և գործառնական ոճի հարաբերակցության մասին» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ռ. Մելիքյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ մակարդակով, ունի գործնական կարևոր նշանակություն, Մ. Ապրեսյանի «Մասնագիտական (իրավաբանական) լեզվի և գործառնական ոճի հարաբերակցության մասին» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

5.2. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի ասպիրանտ Դիանա Ղազարյանի թեկնածուական ատենախոսության վերտառության փոփոխման վերաբերյալ :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Քոչարյանը, Վ. Հովհաննիսյանը, Ա. Իսկոյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ Դիանա Ղազարյանի թեկնածուական ատենախոսության նախկինում հաստատված թեման «Եվրոպայի Խորհրդի և Հայաստանի Հանրապետության համագործակցությունը ժողովրդավարության և մարդու իրավունքների ոլորտներում» վերաձևակերպել հետևյալ վերտառությամբ. «Առևտրի համաշխարհային կազմակերպությունը՝ որպես զարգացող պետությունների տնտեսության ազատականացման և առաջընթացի ապահովման ինստիտուցիոնալ մեխանիզմ», բնագավառը՝ հումանիտար գիտություններ, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ. 00.06 - «Միջազգային իրավունք :

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.3. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ԵՊՀ Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնի աշխատակից, իրավաբան-փորձագետ Աննա Հակոբյանին հայցորդ ձևակերպելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Վ. Քոչարյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը, միջնորդել ԵՊՀ ռեկտորատին՝ Աննա Հակոբյանին ձևակերպել հայցորդ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնում:

5.4. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ՀՀ սահմանադրական դատարանի անդամ, Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի

դոցենտ, ի.գ.թ. Վլադիմիր Հովհաննիսյանի դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Քոչարյանը, Ս. Մեղրյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Վ. Հովհաննիսյանի «Քրեական արդարադատության միջազգային իրավական սկզբունքների հումանիզացումը և դրանց կատարման հիմնախնդիրները» վերտառությամբ դոկտորական ատենախոսության թեման,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.5. ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Էթերի Սևոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Գաբուզյանը, Ա. Մարգարյանը, Ա. Իսկոյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Էթերի Սևոյանի **«Женская преступность в условиях мегаполиса (по материалам Санкт-Петербурга)»** վերտառությամբ ատենախոսության թեման, բնագավառը՝ հումանիտար գիտություններ, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ. 00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք»,

բ/ Էթերի Սևոյանի գիտական ղեկավար նշանակել ի.գ.թ. Ս. Առաքելյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.6. ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Քրիստինե Արսենյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Գաբուզյանը, Ա. Մարգարյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Քրիստինե Արսենյանի «Վաղեմության ժամկետները քրեական իրավունքում» վերտառությամբ ատենախոսության թեման, բնագավառը՝ հումանիտար գիտություններ, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ. 00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք»,

բ/ Քրիստինե Արսենյանի գիտական ղեկավար նշանակել ի.գ.դ. Ա. Գաբուզյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.7. **ԼՍԵՑԻՆ.** Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Աղավնի Մխիթարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Քոչարյանը, Ա. Ղազինյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Աղավնի Մխիթարյանի «Միգրացիոն գործընթացների միջազգային իրավական կարգավորումը» վերտառությամբ ատենախոսության թեման, բնագավառը՝ հումանիտար գիտություններ, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ. 00.06 - Միջազգային իրավունք,

բ/ Աղավնի Մխիթարյանի գիտական ղեկավար նշանակել ի.գ.թ., դոցենտ Վ. Քոչարյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ *Գ. Ղազինյան*

Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*

ՔԱՂՎԱԾՔ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի
2010թ. հունիսի 8-ի նիստի թիվ 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ. Ապրեսյանի՝ «Մասնագիտական (իրավաբանական) լեզվի և գործառնական ոճի հարաբերակցության մասին» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ռ. Մելիքյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ մակարդակով, ունի գործնական կարևոր նշանակություն, Մ. Ապրեսյանի «Մասնագիտական (իրավաբանական) լեզվի և գործառնական ոճի հարաբերակցության մասին» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության :

Խորհրդի նախագահ *Գ. Ղազինյան*
Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*

Իսկականի հետ ճիշտ է
Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*

ՔԱՂՎԱԾՔ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի
2010թ. հունիսի 8-ի նիստի թիվ 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի ասպիրանտ Դիանա Ղազարյանի թեկնածուական ատենախոսության վերտառության փոփոխման վերաբերյալ :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Քոչարյանը, Վ. Հովհաննիսյանը, Ա. Իսկոյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ Դիանա Ղազարյանի թեկնածուական ատենախոսության նախկինում հաստատված թեման «Եվրոպայի Խորհրդի և Հայաստանի Հանրապետության համագործակցությունը ժողովրդավարության և մարդու իրավունքների ոլորտներում» թեման վերաաձևակերպել հետևյալ վերտառությամբ. «Առևտրի համաշխարհային կազմակերպությունը՝ որպես զարգացող պետությունների տնտեսության ազատականացման և առաջընթացի ապահովման ինստիտուցիոնալ մեխանիզմ», բնագավառը՝ հումանիտար գիտություններ, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ. 00.06 - «Միջազգային իրավունք :

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ *Գ. Ղազինյան*
Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*

Իսկականի հետ ճիշտ է
Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*

ՔԱՂՎԱԾՔ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի
2010թ. հունիսի 8-ի նիստի թիվ 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Աղավնի Մխիթարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Քոչարյանը, Ա. Ղազինյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Աղավնի Մխիթարյանի «Միգրացիոն գործընթացների միջազգային իրավական կարգավորումը» վերտառությամբ ատենախոսության թեման, բնագավառը՝

հումանիտար գիտություններ, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ. 00.06 - Միջազգային իրավունք,

բ/ Աղավնի Մխիթարյանի գիտական ղեկավար նշանակել ի.գ.թ., դոցենտ Վ. Քոչարյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը: